

Այդ թուականներէն մեզի հասած են յիշատակարաններ, ուր ինքը կը յիշուի իբր առաջնորդ կամ վերատեսուչ Կեսարիոյ:

Իր Կեսարիա գտնուած ատենն է որ Տիարպէքիւրի մէջ կը վախճանի Սրապիոն, Գրիգոր ԺԳ. հրաժարեալ կաթողիկոսը և իր մեծ ուսուցիչը (1606 Ապրիլ 26) և այս առթիւ ինքն կը խմբագրէ Կեսարիոյ մէջ Գանձ մը (Տաշեան, Յոյակ, էջ 732):

Այս մահուան պատճառով խորապէս ազդուած ամթեցիք, որոնք մօտէն կը ճանչնային զԳրիգոր վրդ. Կեսարացին՝ իրենց Առաջնորդին եւ Աւագ Վարդապետին անդրանիկ սանը, — որ ինչպէս տեսնուեցաւ հաւանօրէն իրենց մէջ սպրած էր մօտաւորապէս տասը երկար տարիներ — զինքը կը հրաւիրեն մխիթարելու համար իր ուսուցիչին սգաւոր հօտը:

Գրիգոր վրդ. Կեսարացի, որ այս միջոցին հրաւէր ստացած էր Կ. Պոլիսէն, փոխանակ անձամբ երթալու Ամիթ, անոնց թուղթ մը կը գրէ և կը խոստանայ Կ. Պոլիս՝ «ոչ վստան պատրիարքոսեան որպէս նոխայ կամին, այլ վստան հաշտութեան, որպէս եւ կամին» երթալէ յետոյ դառնալ Ամիթ եւ իրենց խնդրանքը կատարել:

Ահա այդ թուղթը.